ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԿԱՄ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Պետական նպաստների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերի ընդունման կապակցությամբ եկամուտների ավելացում նախատեսված չէ, իսկ ծախսերի դեպքում հարկ է նկատի ունենալ, որ ծրագրի տեխնիկական ապահովման համար հարկ կլինի հատկացնել լրացուցիչ միջոցներ (Ծրագրային ապահովման ներդրման գնահատականը հնարավոր կլինի ունենալ տեխնիկական առաջադրանքի հիման վրա): Նպաստների գծով ծախսերը նախատեսվել են 2025 թվական պետական բյուջեի նախագծով: Ընդ որում, այս առումով հարկ է նկատի ունենալ, որ ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների համար 2023-2025 ժամանակահատվածների համար նախատեսված միջոցները նույնական են.

Ծրագիր	**Միջոցառում**	**Միջոցառման անվանումը**	**2023թ. (փաստացի) հազ. դրամ**	**2024թ. (փաստացի) հազ. դրամ**	**2025թ (հազ. դրամ)**
1082	12001	Ժամանակավոր անաշխատունակության նպաստ	5,094,192.1	5,880,100.0	5,800,000.0
	12002	Մայրության նպաստ	16,378,050.26	16,440,700.00	19,010,500.0